ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 24» Հունվարի 2020 թվական N 09-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Ձորագետ համայնքի ավագանու 2020թվականի հունվարի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի ավագանու 2019թվականի դեկտեմբերի 23-ի N 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2-Ն որոշումը՝

Որոշում եմ

Հաստատել Ձորագետ համայնքի 2020թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020 թ. հունվարի 24

հ. Ձորագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
« 24» Հունվարի 2020 թվական N 10-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի բ), գ), դ) կետերով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 10 հունվարի 2020 թվականի թիվ10-Ա որոշման, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի տարածքում 2020թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման, աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակների կանխարգելման միջոցառումների պլանավորման նպատակով

Որոշում եմ.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի տարածքում 2020 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման,դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. 1) Համայնքի 2020թվականի բյուջեում նախատեսել գումարներ՝ աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար և մինչև 05.02.2020թ. տվյալները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն ՝համաձայն թիվ 2 հավելվածի:
2) Յուրաքանչյուր ամիս մինչև այդ ամսվան հաջորդող ամսվա 05-ը ներկայացնել տեղեկատվություն՝ կանխարգելիչ միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ:
3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Ձորագետի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2020 թ. հունվարի 24

հ. Ձորագետ

Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզի Ձորագետ համայնքի ղեկավարի
2020թ. հունվարի 24-ի թիվ 10-Ա որոշման

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ

Հ/Հ	Միջոցառումների անվանումները	Կատարող	Կատարման ժամկետը
1	2	3	4
	1. Կանխարգելիչ միջոցառումներ		
1.	Ուսումնասիրել և գնահատել գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը և արդյունքները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:	Համայնքի ղեկավար	Մինչև 15.03.2020թ.
2.	Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար:		
3.	Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հուները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները:		Մինչև 15.03.2020թ.
4.	Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրաածծկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար:		Մշտական
5.	Տարվա ընթացքում ուժեղացնել հսկողությունը գետերի ջրի, ջրամբարների մակարդակի բարձրացման, օդի ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունների նկատմամբ: Կտրուկ փոփոխությունների ժամանակ անմիջապես ստացված տվյալները հայտնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:	Առաջատար մասնագետ	Ամեն օր, սկսած 01.03.2020թ.
6.	Նախապատրաստել համապատասխան քանակի տրանսպորտային միջոցներ, ինչպես նաև վառելիքաքսայուղային նյութերի պաշար՝ հարկ եղած դեպքում աղետի շրջանից բնակչության տարահանման և վերականգնողական աշխատանքներ կատարելու համար:	Առաջատար մասնագետ	Մինչև 15.03.2020թ.
7.	Նախապատրաստել միջոցներ՝ հարկ եղած դեպքում տուժածներին առաջին բուժօգնություն և բժշկական օգնություն ցույց տալու, անհրաժեշտության դեպքում՝ ստացիոնար բուժում կատարելու համար:	Համայնքի բուժաշխատող	Մինչև 15.03.2020թ.
8.	Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով:	Համայնքի ղեկավար	Մինչև 15.03.2020թ.
	2. Հիմնական միջոցառումներ		
9.	Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:	Համայնքի ղեկավար	Մշտապես
10.	Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:	Համայնքի ղեկավար	Անհրաժեշտության դեպքում
11.	Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել	Համայնքի	Անհրաժեշ-

	վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը:	տարահանման հանձնաժողովի նախագահ	տության դեպքում
12.	Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ:	Համայնքի ղեկավար	Ըստ անհրաժեշտության
13.	Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ) ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների:	Համայնքի ղեկավար	Անհրաժեշտության դեպքում

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված 2.
ՀՀ Լոռու մարզի Ձորագետ համայնքի ղեկավարի
2020թ. հունվարի 24-ի
թիվ 10-Ա որոշման

«ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձորագետ համայնքի տարածքում ՀՀ պետական և համայնքային բյուջեներով ու այլ ծրագրերով 2020 թվականի ընթացքում նախատեսված աղետների ռիսկի կառավարման և արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների

ՀՀ ը/կ	Համայնքի բնակավայրի անվանումը	Միջոցառման անվանումը	Անցկացման ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը	Գումարի չափը (հազ. դրամ)	Պատասխանատու, կատարող	Նշումներ
1	2	3	4	5	6	7	8
1	Ձորագետ	-	-	համայնքի բյուջե	0		

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կ.Տ.

Հավելված 3.
ՀՀ Լոռու մարզի Ձորագետ համայնքի ղեկավարի
2020թ. հունվարի 24-ի թիվ 10-Ա որոշման

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

Ձորագետ համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների մասին

1. Վտանգի (աղետի) անվանումը(ները) - սելավ - հեղեղում - սողանք - քարաթափում - և այլն	1. Սողանք 2. Քարաթափում 3. Հեղեղումներ
2. Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը(երը)	1. Դեպի Դսեղ տանող ոտքի ճանապարհից մոտ 700մ դեպի հյուսիս 2. Թունելից մոտ 50մ հեռավորության վրա 3. 1 «Ծաթեր» կոչվող հանդամասից մոտ 1000մ հյուսիս արևելք 3.2 «Ձորագյուղ» կոչվող հանդամասից մոտ 700մ հյուսիս արևելք
3. Առաջացման հնարավոր պատճառները	Անձրևներ Տեղումներ
4. Վտանգավոր տեղամասերի նկարագրությունը: Վտանգավոր գոտում գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը	1.Վտանգ է սպառնում երկու բնակելի շենքերին և երեք առանձնատան 2.Միջպետական մայրուղուն (30կմ) 3.1 Բնակելի 2 շենք,1 սեփական բնակարան և դպրոցի շենք, թվով 88 բնակիչներ 3.2 Թվով 11 առանձնատներ, 27 բնակիչներով, Վանաձոր –Ալավերդի Մ-6 միջպետական ճանապարհի 26կմ-ի հատվածում
5. Կանխարգելիչ միջոցառումների առաջարկությունները իրականացնելու համար	1. Կառուցել պատնեշներ 2.Կազմակերպել արհեստական քարաթափում 3.Անհրաժեշտ է մաքրել հեղեղատարը բեկորներից և տեղադրել ճաղավանդակ
6. Համայնքների բյուջեներում կամ այլ ծրագրերով 2018թ-ին պլանավորված, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելիչ միջոցառումների համար ծախսերի չափը ըստ միջոցառումների տեսակների	Չի նախատեսվում

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
« 24» Հունվարի 2020 թվական N 11-Ա

«ԹՈՒՖԵՆԿՅԱՆ ՀՈՍՓԻԹԱԼԻԹԻ» ՍՊԸ-ԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՐԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 19-րդ կետով՝, հիմք ընդունելով «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ի 2020 թվականի հունվարի 22-ի հայտը՝

Որոշում եմ.

1. Ձորագետ համայնքի վարչական տարածքի 1 փողոց 127 հասցեում գործող «Թուֆենկյան Հոսփիթալիթի» ՍՊԸ-ի /ՀՎՀՀ00066784/ հայտը բավարարել և նրան տալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվություն 2020թվականի հունվարի 1-ից մինչև 2020թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար:
2. Աշխատակազմի առաջատար մասնագետին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված գործունեության թույլտվության համար նախատեսված տեղական տուրքերի գանձումը և սահմանված կարգով տրամադրել թույլտվությունը հավաստող փաստաթուղթը:
3.. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
2020 թ. հունվարի 24
հ. Ձորագետ